

BACCALaurÉATS GÉNÉRAL ET TECHNOLOGIQUE

SESSION 2017

ARMÉNIEN

Mercredi 21 juin 2017

LANGUE VIVANTE 2

Série L – Durée de l'épreuve : 3 heures – coefficient : 4

Séries ES-S – Durée de l'épreuve : 2 heures – coefficient : 2

Séries STD2A, STI2D, STL, ST2S, STMG – Durée de l'épreuve : 2 heures – coefficient : 2

Le candidat traitera, dans la langue étrangère, l'ensemble des questions de l'épreuve pour laquelle il compose.

L'usage des calculatrices électroniques et du dictionnaire est interdit.

Dès que ce sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.
Ce sujet comporte 7 pages numérotées de 1/7 à 7/7.

Répartition des points

Compréhension de l'écrit	10 points
Expression écrite	10 points

Texte en arménien occidental

«Հայերը կը գարնանան, որ անգլերէնի փոխարէն հայերէն կը սորվին»,-Ելենա

Չիկմենյովա

Ամայիա Գարոյեան

www.aravot.am

22 Փետրուար 2017

5-6 տարի առաջ սոցիալական կայքերէն¹ մէկուն հայերէնի ուղղագրութեան² նուիրուած խումբի մը մէջ պատգամի³ մը հանդիպեցայ: Ելենա Չիկմենյովա անուն-մականունով օգտատերը⁴ ռուսերէն մի քանի նախադասութիւն գրած էր եւ կը խնդրէր հայերէնի թարգմանել:

- 5 Երբ այդ պատգամները սկսան աւելի յաճախ երեւիլ, որոշեցի ընկերութեան առաջարկ ընել, ու մենք ընկերներ դարձանք: Ամէն անգամ, երբ ան ինձմէ հերթական նամակով կը խնդրէ բան մը թարգմանել կամ հայերէնի քերականութեան⁵, ուղղագրութեան հետ կապուած հարցով մը օգնել իրեն, ես կը յուզուիմ, յետոյ ալ կը հպարտանամ, որ հեռաւոր Սիպիրի⁶ մէջ կայ ռուս կին մը,
- 10 որ մինակը հայերէն կը սորվի, կ'ուսումնասիրէ հայոց պատմութիւնն ու մշակոյթը, կը յաճախէ հայկական կեդրոն, կիրակնօրեայ դպրոց, Կոմիտաս կը լսէ, Թումանեան⁷ ու Մեւակ⁸ կը կարդայ ...

- Օր մը անոր հարցուցի, թէ ինչո՞ւ հայերէն կը սորվի: Կը պարզուի թէ 14 տարեկանին հայ ընկերուիի ունեցած է, եւ այդ աղջկան ծնողներն են որ իրեն
- 15 հայերէն գրել- կարդալ սորվեցուցած են: Մի քանի ամիս ետք անոնք բաժնուած են՝ այդ ընտանիքը Հայաստան վերադարձած է: Ելենան այնքան հաւնած է մեր լեզուն, որ շարունակած է մինակը սորվիլ:

¹ սոցիալական կայք – réseau social

² ուղղագրութիւն – orthographe

³ պատգամ – message

⁴ օգտատեր – internaute

⁵ քերականութիւն – grammaire

⁶ Սիպիր – la Sibérie, région en Russie

⁷ Թումանեան – Hovhannes Tumanyan, écrivain arménien

⁸ Մեւակ – Paruïr Sevak, poète arménien

Վերջերս հարցուցի՝ հայերը ինչպե՞ս կ'արձագանքեն⁹, երբ իմանան, որ ան հայերեն կը սորվի: [...] Ան պատասխանեց.

20 « ...Հայերը անշուշտ կը զարմանան, երբ կ'իմանան, որ հայերեն կը սորվիմ, հիմա բոլորը անգլերեն կը սորվին: Ինձի համար հայերենը ավելի մօտիկ է: Այն ինձի համար կարծես գեղեցիկ երաժշտութիւն ըլլայ ու չեմ գիտեր ինչու, պարզապէս բառ չեմ գտներ բացատրելու համար...

Գիտես, ես կը յաճախեմ հայկական կեդրոն, կիրականօրեայ դպրոց ու շատ կը
25 զարմանամ, որ մեր քաղաքի հայերը հայերեն տառերը չեն գիտեր, անկեղծ ըլլալու համար, ես գիրենք չեմ հասկնար: Մերոպ Մաշտոցը ստեղծած է հրաշալի այբուբեն: Հայ ժողովուրդը իր պատմութեան մէջ ամենադժուար պահերուն անգամ պահպանած է իր գիրն ու գրականութիւնը եւ հասցուցած¹⁰ է մեզ: Իւրաքանչիւր մարդ պիտի հպարտանայ իր մայրենի լեզուով: Մայրենի
30 լեզուն մեր գանձն է:

Հայերենը իմ մայրենի լեզուս չէ, բայց ես հպարտ եմ, որ կրնամ խօսիլ, գրել ու կարդալ հայերեն: Ինչո՞ւ, որովհետեւ հայոց լեզուն աշխարհի ամենահին լեզուներէն է...

Որքան շատ գիտնամ Հայաստանի մասին, այնքան ավելի շատ կ'ուզեմ իմանալ:
35 Այդ քննադ երկիրը չի դադրիր զիս զարմացնելէ ...

⁹ արձագանքել – réagir

¹⁰ հասցնել – transmettre

TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Հեղինակը ի՞նչպէս կը ծանօթանայ Ելենայի հետ:
2. Ի՞նչ կը խնդրէ Ելենան հեղինակէն:
3. Ելենան ո՞ր կ'ապրի:
4. Ելենային ո՞վ հայերէն սորվեցուցած է:
5. Հայերէնի այբուբենը ո՞վ ստեղծած է:

II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Les candidats de la série L doivent traiter les DEUX questions. (120 mots minimum pour chaque question)

Les candidats des autres séries traitent UNE question au choix. (150 mots minimum)

1. Ելենան սոցիալական ցանցերը կ'օգտագործէ հայերէն սորվելու համար: Բացատրեցէք, թէ ուրիշ ինչ նպատակով այսօր կարելի է օգտագործել սոցիալական ցանցերը:
2. Ելենան հայերէն կը սորվի, քանի որ կը խորհի թէ հայերէնը գեղեցիկ լեզու է: Բացատրեցէք, թէ դուք ինչո՞ւ հայերէն կը սորվիք: